

**«Կեղտաջրի նստվածքի օգտագործմանը,
հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը,
մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը
ներկայացվող պահանջները սահմանելու մասին»**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-- 2022թ. N --- Ն

**ԿԵՂՏԱԶՐԻ ՆՍՏՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, ՀԱՎԱՔՄԱՆԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ,
ԿՈՒՏԱԿՄԱՆԸ, ՄՇԱԿՄԱՆԸ, ՕԳՏԱՀԱՆՄԱՆԸ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի **62.3**-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել կեղտաջրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

---ի N ----Ն որոշման

ԿԵՂՏԱԶՐԻ ՆՍՏՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, ՀԱՎԱՔՄԱՆԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ,
ԿՈՒՏԱԿՄԱՆԸ, ՄՇԱԿՄԱՆԸ, ՕԳՏԱՀԱՆՄԱՆԸ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են կեղտաչրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները:
2. Կեղտաչրի նստվածքը կեղտաչրի մաքրման գործընթացում կեղտաչրից անջատված օրգանական և հանքային ծագման պինդ նյութերի խառնուրդամասն է, ինչը կախված կեղտաչրի մաքրման եղանակից բաժանվում է նստվածքի և տիղմի:
3. Նստվածքը կեղտաչրերի մեխանիկական մաքրման գործընթացում կեղտաչրից անջատված օրգանական և հանքային ծագման պինդ նյութերի խառնուրդն է:
4. Կեղտաչրի կենսաբանական մաքրման գործընթացում առաջացած տիղմը նույնպես օրգանական և հանքային ծագման նյութերի խառնուրդն է՝ մեկ այլ հարաբերակցությամբ:
5. Կեղտաչրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման արդյունքում առաջացած նստվածքը և տիղմը մշակվելուց հետո կարող է օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով՝ որպես պարարտանյութ կամ անասնակեր, ինչպես նաև շինանյութերի, կենսազազի և կենսավառելիքի արտադրություններում, հողերի ռեկուլտիվացման գործընթացում՝ համապատասխան ոլորտները կարգավորող առկա պահանջներին համապատասխան:
6. Օգտագործման ենթակա տիղմը համարվում է մշակված և կիրառման համար պիտանի, եթե ենթարկվել է կենսաբանական, քիմիական, ջերմային մշակման կամ երկարատև պահման և համապատասխանում է կիրառման ոլորտի պահանջներին:
7. Կենցաղային կեղտաչրերի՝ կենսաբանական մաքրման արդյունքում առաջացած և մշակված տիղմը կարող է օգտագործվել որպես անասնակեր և պարարտանյութ, եթե դրա քիմիական և մանրէաբանական կազմը բավարարում է համապատասխան սանիտարական կանոններին և նորմերին (Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012թվականի հունիսի 6-ի N 84-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրաման):
8. Հողերի պարարտացման նպատակով օգտագործման դեպքում՝ ելնելով հողի որակի մոնիթորինգային ցուցանիշներից (հողերի տեսակ, քիմիական կազմ և աղտոտվածության աստիճան), կեղտաչրերի տիղմի հավաքմանը, տեղափոխմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանն ու օգտագործմանը կարող են ներկայացվել լրացուցիչ՝ հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ:
9. Կեղտաչրերի նստվածքի և տիղմի հավաքման, պահման, մշակման պայմանները պետք է բավարարեն համապատասխան շինարարական, տեխնիկական, սանիտարական կանոններին և հիգիենիկ պահանջներին (ՍՆԻՊ 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և

կառուցվածքներ»):

10. Կեղտաջրերի նստվածքի մշակման կառուցվածքներին ներկայացվող պահանջները սահմանված են Կառավարության կողմից հաստատված ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով, որոցով տրված են ընդհանուր պահանջներ համապատասխան տեխնոլոգիաների և սարքավորումների համար (Կառավարության 2003 թվականի օգոստոսի 28 N 1228-Ն որոշում):
11. Կեղտաջրերի մեխամիկական մաքրման գործընթացում առաջացած նստվածքի հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Թափոնների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքներով: